


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիյ Համար
Տարեկան Ֆրբ 10
Վեցամսեայ 7 5
ԿԱՆԻԽԻ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ֆրբ 12
Վեցամսեայ 6
ԿԱՆԻԽԻ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրահարակուած գրուքիւնը եւ յսրուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԲ

Կը լսենք թէ կարգ մը իմաստակ
պարոններ, երբ իրենց անհատական
մէկ անվայել արարքը քննադատուած
կը տեսնեն «Հայելի»ի միջոցաւ, իրենց
պարզամիտ համակիրներուն կը յայտա-
րարեն եղեր որ անոնց պատկանած կու-
սակցութեան դէմ է գրածնիս:

Առաջին օրէն ըսած և հաստատած
ենք թէ, մենք կուսակցութեան չենք
պատկանիր, (այսչափ կուսակցական թեր
թերուն մէջ ընկերական և ընտանեկան
այս մէկ թերթին ալ շատ կը տեսնեն,)
մենք ժողովուրդին մէկ պարզ անդամն
ենք, ու ըստ մեր նուիրական կոչման
մոլութիւնները պիտի ձաղկենք, և եթէ
երբեմն «կուսակցական մը սանկ է ը-
րեր նանկ է ըրեր» ըսելով խօսքերնիս
կը չեղտենք, անոր պատկանած կուսակ-
ցութիւնը վար զարնելու նպատակաւ չէ,
այլ կ'ուզենք մեծերուն իմացնել թէ
իրենց կուսակցութեան մէջ պատիւ չի
բերող մարդիկներ ունին, և աչքերնին
չորս բանալով, ատանկները արտաքսե-
լու են: Ու կը կարծենք թէ մեր այս
ուղղութեան ամեն կուսակցութիւնք կը
հաւանին. հետեւաբար պիտի չարունա-
կենք այսպէս յառաջանալ, ձաղկելով ու

մատնանիշ ընելով այն ամենը, — ըլ-
լան կուսակցապետ, ըլլան գործօն կամ
պարզ անդամ և կամ համակիրք, — ո-
րոնց արարքը երեսի աղտ կը բերեն ըն-
կերականութեան:

Խօսք հասկցողին շատ բարեւ:

Կը լսենք թէ պարոն մը, «Ես կու-
սակցութեան մը ԳՈՐԾՕՆ ՄԷԿ ԱՆԴԱՄԸ
եմ, միշտ դրամ կրնամ ունենալ ըսե-
լով կը ճգնի եղեր համոզել կին մը, որ-
պէս զի զայն իրեն հոմանի բռնէ:

Ստուգեցինք թէ մէկ քանի անծա-
նօթ անձինք Պուլկարերէն լեզուաւ հե-
տեւալ տոմսակը տպագրել տալով և «ԷՐ-
ՄԷՆԻ ԳՕՄԻԹԷՍԻ ԻԶԻԻՆ ՏԻՐ» ըսելով,
ատոնցմէ բաւական բան ծախեր են
Պուլկարներուն:

(Թարգմանութիւն.)

Թիւ 298

Հինգ մեծ իւղաներկ Պատկերներ

Շրջանակաւոր

Պիտի շահին 4 թիւեր

Գին 3 լէվ

Այս տոմսակին մէջ, ըստ օրինի վի-
ճակահանութեան քաշուելիք օրն ու տե-
ղը և գանձապահի անունը նշանակուած

չըլլալէն, չի՞ կառկածիր մարդ թէ խաբէութիւն մ'է որ կը գործուի «Էրմէնի գօմիթէսի իշխն տիրոջ» քողին տակ:

«Սամաթիոյ պատմութիւնը պիտի գրեմ ու հրատարակեմ» ըսելով ժողովուրդէն բաւական նպաստ հաւաքող ու աղտոտ շապիկի պէս երկու օրը անդամ մը գոյն և անուն փոխող նախկին Պ. Արմէն Շտանէն կը պահանջուի կամ դրքերը յանձնել եւ կամ դանձած դրամները ետ գործնել:

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Գոհութեամբ լսեցինք թէ, Ռուս-ճուզի Խաղ. Խորհուրդը Զատիկի առթիւ 40 երկսեռ աղքատիկ ուսանողներու հազուստ և կոշիկ բաշխած է:

Կը լսենք նաև թէ մօտերս տեղւոյն երկսեռ վարժարանաց շինութեանը պիտի ձեռնարկուի:

ՎԱՌՆԱԻ ԱՂՔԱՏԱՆԱԽԸ

Գործադիր ժողովիս պաշտօնավարութեան միամեա շրջանը լրացած ըլլալով, կը խնդրուի մեր բաժանորդներէն որ առաջիկայ կիրակի օրը (Ապրիլ 19) կէս օրէն վերջը ժամը 2ին գումարուելիք ընդհանուր ժողովին ներկայ գտնուին: Ընդհ. ժողովը պիտի գումարի Սիսակեան ընկերութեան Ընթերցարանի սրահը:

Օրակարգ

1. Հաւարատութիւն Գործ. ժողովոյ.
2. Ընտրութիւն նոր վարչութեան:

Ի դիմաց Գործ. ժողովոյ

Վ. Ատենադպրի

Ատենապետ

Գ. Փափազեան

Գր. Սիմոնեան

Զատիկի կիրակին քաղաքէս ի Պոլսուղեւորեցան ինը երկսեռ գաղթականք, իսկ անցեալ կիրակի 153:

Տե՛ս երես 432 Ռուսճուզի երիտ-Ընթ. Ընկերութեան յայտարարութիւնը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 10 Ապրիլ

«Այս տարի Զատիկական սօնին առթիւ Բերայի Աղքատախնամը եկեղեցեաց դռներու պնակներուն գլուխը օրիորդներ և տիկիներ նստեցուցեր էր: Այս դրութիւնը եթէ նիւթական յաջող արդիւնք մ'ալ տուած ըլլայ, դարձեալ ցաւալի է, վասն զի պարզապէս ընդօրինակութիւնն է այն կարգ մը խանութպաններուն, որոնք շատ առևտուր ընելու համար կին գործակալներ կը գործածեն խանութներուն մէջ: Մեր անձնական գործերուն ու անհատական ձեռնարկութեանց մէջ յաջողելու համար գործադրած միջոցներնիս կրօնքին մէջ ալ չի փոխադրենք, որոնք Քրիստոնէական կրօնքին վսեմութիւնը կը ախտեն, ոգին կը խեղաթիւրեն և տխուր երեւոյթ մը կը պարզեն դիտողներու աչքին առջեւ:

— «Մայրեկեղեցւոյ քահանայից կողպուտի սնտուկէն աւագ շաբթուն 1000 զրշի գումար մը կողպատուեր է:

Բսժ. — Կողպատողը անպատճառ աղւոր-Զատիկ մը ըրած ըլլալու է:

— «Նոյն շաբթուն, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ ալ հետեւեալ դայթակղական դէպքը տեղի կուենայ:

Տեղւոյն Թաղ. Խորհուրդը որոշեր է եղեր որ, ներկայ սօնական օրերուն, եկեղեցիին մէջ կարելի եղածին չափ

քիչ պնակ շրջագայի . այս տնօրէնու-
թեան գէմ քահանայ մը ըմբոստանա-
լով պնակ մը կառնէ և «շօրեկդրամ-
եաին թապախն է, անտես մի՛ առնէք»
ըսելով, կը սկսի ժողովուրդին մէջ շը-
ջագայիլ : Թաղ . խորհրդոյ ասենապետը
կ'ուզէ արգելել, բայց քահանան կընդ-
դիմանայ և կռիւ կը ծագի, այնպէս որ
եկեղեցիին արարողութիւնը պահ մը կը
խանգարուի և ժողովուրդը կը սկսի տըր-
տնջել : Բարեբախտաբար տեղւոյն քա-
րովիչը Ալէքսանտրեան Սրբազան կը մի-
ջամտ : ու տէրտէրին ձեռքէն կ'առնէ
այդ շօրեկ—պէտքէն դրամեաին թա-
պախը :

Բոժ . — Պողաղավէրութեան բա-
րենիչ մը այդ տէր պապաին :

— «Ձատկի շաբթուն հոս միսին
քաշը (մէծիտիէն 20 զրուշի հաշուով) 9
զրշի բարձրացաւ, որովհետեւ ոչխարավա-
ճառք մսածախսերուն հետ ույժուշմիչ են
եղեր, և շնորհիւ քաղաքապետութեան
պաշտօնից աչք գոցելներուն, ամեն աղ-
գի էսնաֆ դասակարգը միսին երեսը
մինակ մսածախի խանութին մէջ կը
տեսնէ կոր :

— «Անցեալները Ղալաթիոյ կամուր-
ջի կամարին տակը սպասող մաքսաւն
պաշտօնեաներ, մաքսէն փախցուած առ-
պրակներով հարստ կը բռնեն, զոր ըստ
օրինի կը պարտաւորին մաքսատուն փո-
խադրել, սակայն ո՛վ զարմանք, ճամ-
բան, այդ տոպրակներու պարունակու-
թիւնը ալիւր կտրեր է . ինչ կըսէք այս
հրաշքին »:

Բոժ . — Ասոր կըսեն՝ գողը գողէն
գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ :

«Հայելիի Ա. տարւոյ 50 թիւերը
մաքուր կազմեալ կը վաճառին, գին 10 Ֆրք :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանա Բոժոժիկ և Ընկ .

Այս շաբթու հրապարակին վրայ
յայտնուած այն խոհուն իմաստասիրու-
թեան վրայ, թէ «մենք մեր կրթարան-
ներէ ակն'ալելու չենք աւանդական
«բարի քաղաքացին» . այլ աղատութեան
սիրով լեցուած հայ զինուորը», որոշուե-
ցաւ վարժարաններէն գիրքերը վերցը-
նել ու անոնց տեղը դնել թնդանօթն
ու հրացանը : Կըսեն թէ մեծաքանակ
թնդանօթ պիտի ապուրուի աշփեան
թօքճի հաճի Մելքոնին :

Մանկավարժական խողալիկներու
տեղ ալ բաթլանկուճ և քէստանէ ֆի-
չէնկին պիտի դրուին :

Քամչաթքա 13 ապրիլ .

Երէկ գիշեր Հօթէլ-մօսկուաէն բաթ-
քիւթի և չաթ-չութի ձայներ առնուե-
լով, ամբողջ հոս գիւնց, ու տեսաւ որ
յեղավոխականի հովեր առնել սկսող պա-
րոն մը կին մը տարեր էր նոյն հօթէլը,
«մատաւն է» ըսելով . բայց այդ միսիւրը
մէկը չէր կըլլեր ու ներքին պաշտօնէ-
ութիւնը փառաւորապէս ծեծ մը քա-
շեր դուրս նետեր էր այդ պարոնը, որ
գլուխը հագած երկայն կրկնոցին մէջ
խօթած՝ կը ջանար այս ըրած սեւրտու-
թիւնը ծածկել :

Ստասիօն փողոց

Այս օրերըս վառնալի մէջ շառցած
են հովիւու տիբլօմաթիքները, որոնց
գլուխները խելքի ծանրութենէն օր օ-
րի իյնալու վրայ են . . . սալախանալին
մէջ : Եւրոպացի վաճառական մը մտա-
գիր է եղեր ասոնցմէ մեծաքանակ գը-
նելով Բարիզի ակադեմիին տանիլ . .
սալախուռան կոխելու համար :

ՄԱՂԱՂԿՈՒ ՄՆՏՈՒԿԸ

Ա.

Մարտ ամսոյ 13ին, ի Ռուսճուգ բնակող անձնաւորութիւն մը, իր ֆիլիպէի մէկ բարեկամէն կը ստանար նամակ մը, որով կը յանձնարարուէր այնինչ փողոցը բնակող տիկին Մաղթուհի Պէտկարեանի զիմելով, գաղտնապէս իմացնել թէ Ռուսճուգի թղթատարանին մէջ անոր հասցէին զրկուած նամակ մը կը սպասէ :

Նոյն անձը իրեն եղած այս յանձնարարութիւնը անմիջապէս կատարած էր :

Տիկին Մաղթուհի, որ հազիւ 30 փառուններ տեսած, միջահասակ, ցորենագոյն և ըստ բաւականին գեղանի էր, հետեւեալ առաւօտ, եկեղեցի երթալու պատրուակաւ, Ռուսճուգի թղթատարանը կը մտնէր շտապով և կը ստանար նոյն նամակը հետեւեալ հասցէով.

Madamme

Maglouhi Bédagarian

(Poste Restant)

Roustchouk

Թեթեւիկ կարմրութիւն մը իր դող ելնելէն դեղնած այտերը գունաւորեց ու շրթնանցը վրայ ուրախութեան ժպիտ մը երևցաւ, որովհետեւ գիրը ճանչցած էր. նամակը գրպանը նետեց ու միւսնոյն շտապով տուն վերադառնալով, սենեակը առանձնացած, խզեց պահարանը :

Նամակին պարունակութիւնն էր հետեւեալը.

Սիրեցեալ Մաղթուհի,

Գիտես թէ վեց տարիներէ ի վեր զբօս կը պաշտեմ. անշուշտ մոռցած չես թէ՛ Պոլսոյ մէջ և թէ ի Ռուսճուգ դառնալու ատենն իսկ մեր երկուքին անցուցած սիրալիր ժամերը, որոնք որքա՞ն շուտ կը սահէին : Աւա՛ղ որ, անձնական գործերուս պատճառաւ 5 ամիսներէ ի վեր քեզմէ բաժնուած եմ եւ գրեթէ միշտ հիւանդ եմ : Բայց այս վի-

ճակը չի կրնար երկար աւելլ, գթա՛ իմ վերաս մաղղուհիս, ու համոզելով ամուսինդ թէ ի Պոլիս մայրիկիդ այցելութիւն մը կուզես տալ, գալ չորեքշաբթի օրը Առաւմտիկի, ուր կը բնակի իմ հաւատարիմ բարեկամս, Ան : Գիշեր մը անոր տունը անցոր և հետեւեալ հինգշաբթի օրը Առաւմտէն Պոլսոյ մեկնելիք շոգենաւով հոս ֆիլիպէ եկուր : Ամէն բան կարգադրած եմ քու հանգստութեանդ համար : Սենեակ մը պիտի վարձեմ, ուր երկուքնիս մէկ սիրտ ու մէկ հոգի ապրինք : Ամուսնոյդ կասկածին տեղի չի տալու համար ամին միջոց խորհած եմ : Դուն՝ իբրեւ թէ Կ. Պոլիս կը բնակիս, երկու շաբաթը անգամ մը առ ամուսինդ զըրկելիք նամակներդ հոս խմբագրելով ինձ պիտի յանձնես, ես զանոնք Պոլսոյ մէջ բնակող իմ մէկ հաւատարիմ բարեկամիս պիտի զըրկեմ, զորս պիտի յանձնէ Պոլսոյ թղթատարին՝ ի Ռուսճուգ ամուսնոյդ տանելու համար. Դուք անոնց պատասխանները պիտի ուղղել տանք նոյն բարեկամիս անուանը. այսինքն, առաջին գրելիք նամակաւդ պիտի իմացնես ամուսնոյդ թէ՛ մայրիկդ ի Պոլիս նոյն անձին տունը վարձուր եղած է. հետեւեալ պարտաւոր է անոր հասցէին զրկել նամակները. ու բարեկամս Պոլսէն ի ֆիլիպէ մեկնելիք երկաթուղիի թղթատարով ամուսնոյդ այդ նամակները մեր ձեռքը պիտի հասցնէ : Կը տեսնես թէ, այս ամենը ինչ աղւոր խորհած եմ, ուստի, առանց վայրկեան մը կորսնցնելու, փութա՛ որոշումդ յայտնել ինձ ո՛ր պաշտելիդ իմ Մաղթուհի :

Նամակդ բօսթ-ռէսթանդ զրկէ :

Մնամ միշտ ծարաւի սիրոյդ, ըստ օրինակի պատգեալ եղջերուացն,

Նինի-մուլէն

(Քառակնեայ)

Տիկին Մաղթուհի սոյն նամակը անգամ մ'ալ ուշի ուշով կարդալէ ետքը, հետեւեալ հասցէին գրեց իր պատասխանը, և իրիկուտն

եկեղեցիին ալ ներկայ գտնուելու պատրուակաւ՝ նամակը տարաւ թղթատարին տուփը ձգեց :

*Monsieur
Nini—moulen Karagnia
(Poole Retent)
Philippopolie*

Նամակին պարունակութիւնն էր .

Սիրելի Նինի—մուլէնս ,

Կը հաւատա՞նք եթէ ըսեմ թէ ասկէ բաժնուելէդ 'ի վեր ո՞րչափ տխուր եմ . . . Զքեղ միշտ քովս ունենալ կ'ուզեմ : Առաջարկդ սիրով կ'ընդունեմ , միայն թէ արգելք մը կայ , զոր դուն կրնաս մէջտեղէն վերցնել . այն է՝ քու արդի զբաղած արհեստդ . որ իմ աչքիս շատ տգեղ կերևայ . պէտք ես թողուլ ու դեղագործութեամբ զբաղիլ որ աւելի պատուաւոր արհեստ մ'է : Այս պայմանով կրնամ ընդունել քու առաջարկդ , սիրուն Նինի—մուլէնս : Կը խոստանա՞նք .

Պէտք է գիտնաս նաև որ , խաղացողի ասպարէզը ձգել խոստանալէդ ու իմ ֆիլիպէ հասնելէս ետքը եթէ դարձեալ շարունակես այդ արհեստը , հետեւեալ օրը ֆիլիպէէն Կ . Պոլիս պիտի նետուիմ : Ամօթ չէ ա , քու արդի արհեստդ ջիղերուս կը դպչի : Եթէ կ'ընդունիս . այս պայմանս փութա՞ պատասխանել , միևնոյն ատեն վառնա բնակող Ան բարեկամիդ հասցէն ալ իմացուր ինձ , որպէս զի օր առաջ սնտուկս անոր զրկեմ . այդ բարի մարդուկը որ մեր յարաբերութեանցը վաղուց՝ ծանօթ է , շատ վստահելի է : Պարտաւոր ես Անին ալ գրել որ իմ երկտողս առնելուն պէս երթայ Վառնաի երկաթուղիի կայարանէն սնտուկս առնէ եւ երկու օր վերջն ալ զիս հոն սպասէ :

Անհամբեր սպասելով նամակիդ ,

Մնամ միշտ քու քաղցր երազներովդ տոգորուող

Մաղթուհի Պետակարեան

(Շարունակելի)

Կ Ս Մ Ի Թ

Ձեռնագրերու թուական

(Շար.)

Գուրաի թահլիլին զրկուած ,

. . . Ընդգրկած աշխատանքին վաստիւր եւտը վաճառարներու պիտի գրեմ ձեւապարներն լուծֆէն վէ թէնէզդիւէն հիմմեթ պուրուրմասը պապընտա օրպապտէ վէ հէր հալտէ էմրու եպրու պին լէպլէպինին տիր :

Պէնտէի

Մաշա պէյի

Ընդան խաթունի աղօթքէն պատառ մը ,

Նայեաց սիրով վայ կըտկտայ ,
Ի կործ տեսեալ կործս ծեռաց ,
Ի տուրնջեան ել կիշերին ,
Տացուր քեզ փառ սան ըռէհին :

Ձերիպաշի Սալիշէն .

Ապէ սօսթա քերէ , հէյ տանա պուրնու , նա բիրի մի սիւհիւտ աալընա , օ Մէմիշ գան իշինէ օթուրասը , պէ հատէ պէ , սօստա քերօ բէնտօմ օրմանտան եանը , էյ ալլահ կէօղիւնիւ օեսեըտը , պալայ աֆազան թըգասըն , հա բիրի պէ , թիււււ . պալայ ալլահըն գըվըրգ տալընա օլրայայըտըն , պէ հա պէ , բանէրլէրի սէքէթլէրի բիրի էթ բօբօնալարա :

Արուպ Սէլիմէն

Քըթիր պէսէլմու ալէգում պըթրաժէք եընա էթթիպլի մաթթուպ էլիլ մէլ պէրթու աթէշ , բէաթթու էպէղաթլու շուվէյթ հաշիշ , աթէշ պուֆաթ , մասարի խօթ օթնը մըսըրի պը սէլամը ալէգում ուլուվլէթ ալա մարթա : Էլ գամէրի ֆանթաղիյա գըթիր ֆիւլիւլ մաֆիշ :

Մուալլիմ Նաճիէն

ՄԱԳՊԵՐ (Գերեզման)

Էյ զաիրի իթիպարբէրվէր ,
Սէյր էթ , նէ՞ կիւզէլ տուրուր շու մագպէր .
Եալընըզըլը խօշնիւմա տէիլ մի ,
Եա սատէլիկի տէիլ մի տիլպէր :

Ղայեթլէ հազին իբէն օ թօրրադ ,
 Իւթիւնտէ եագըճմամը մը մերմէր .
 Նափինտէ պիթէն նիհալը կիւպիզ .
 Պա'գ, պա'գ, նէ՞ դատար լաթիֆ մանդէր .
 Անճագ հէփսինտէն կիւզէլտի էյ վա'հ,
 Այթընտա եաթան զէվայլը տուլթէր :

Վարպետնցի ուստա Պատօսէն .

Ասպահըն զալիմէրա,

Էրօ էսէնա պէն սանա կօնտերադիմ մէխ-
 թուպլարըն պիր զարշուրընը հալէա ալա-
 մատըն . Թիրիլեա զէյթինի իլէ պալխան բէյ-
 նիրէրինին ֆիյաթլարընաա կէզէն խաֆթա
 կիպի մէղալօ պիր ֆարիս կօրէմէյօրըն . սա-
 լամուրա բէյնիրի ֆըշըլարընաան թուլուպա
 սուլունու էիսիկսիւզ էտէսին հէյ զարտաշըմ
 Թօտրի, քի սիւնկէր կիպի էմսին տէ օգգա
 պասըն :

(Շարունակելի)

ԽՆԴԱԼՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն անձինք որ (Ա)ով կը խնդան,

— Ինչպէս հա' հա' հա'—ընդհան-
 լապէս անկեղծ, պարկեշտ սակայ՝ եր-
 բեմն փոփոխամիտ են :

(Է)ով խնդացողները—հէ' հէ' հէ'—
 հեղահամբոյր բնութիւն մը ունին ու
 յաճախ մեղամաղձոտ են :

(Ի)ով խնդացողներն.—ինչպէս հի'
 հի' հի'—տղայք և երախտագէտ, հաճո-
 յական, պարզատէր, երկիւղած ու երկ-
 միտ անձինք են :

(Օ)ով խնդացողք—հօ' հօ' հօ'—քա-
 շասիրտ, խրոխտ ու յանդուգն կըլլան :

Վերջապէս (Իւ)ով խնդացողները—
 հիւ հիւ հիւ—մարդատեացներն են
 կըստի . կուզէք հաւատացէք, կուզէք
 ոչ :

Թարգմ.



Ջատիկն երրորդ օրը, տեղիոյս տօնա-
 վաճառին մէջ .

— Քա ագիւն աղոր ալիկ է . ո՛ր ուն
 աղջիկը ըլլալը գիտնայի տէ տալոյս տղուն
 ընէի . Թամ անոր ուղած պիշիմը քան է .
 պօյը, պօսը, սօլլունութիւնը, ճերմկութիւ-
 նը . հասլը բէք անլըխա բա՛ն . տճապա ու-
 ըի՞ն աղջիկն է .

— Ո՞րու համար կըսես, ես հոս ա-
 տանկ աղջիկ չեմ տեսնա, կոր :

— Աման դուն ալ չի տեսնայիր, իշ-
 թէ սա էճէլ պէլիին դիմալը կայի եր սէյիր
 կընէ կոր, հետն ալ սեւերով կիւկ մը կայ :

— Վոյ աշկիւ խաղայ հէմէն, քո ա-
 նիկայ վեց օխտը տարուան կէնճ է . երկու
 հատ ալ չօճուխ ունի :

— Մեղայ . . . ե, ինչ գիտնամ քու-
 ըուկ, հագածներէն աղջիկ գիտցայ :

— Գուն խըլըխին ի՞նչ կը նայիս, քառ-
 սուն տարու կնիկը պիլէ 16 տարու աղջկան
 պէս կը հագուի կը սգուի կ'ը . հիմակուն
 խըլըխներէն նէ՛ աղջիկը պիլլի է եւ ալ կը-
 նիկը :

Տէր պապանըն պիրի՝ էվէնմէք իշին
 հաղըրլըզ կէօրէն պիր տէլիգանըլըյա .

— Օրհնած, խոստովանանք օլմազսն .

— Նէֆի խոստովանել օլայլմ .

— Կիւնահլարընը .

— Պէնիմ կիւնահլմ հօգ տըր տէր
 պապա, վէ էկէր վար ըստ՝ օ տա պէշ բա-
 րամ օլմատըլը հալտէ էվէնմէյէ գալգըշ-
 մամ տըր :

Անթիպաճը Եսահունին պիրի, դիյ-
գըյմէթ պիր Խաչ պուլուպ, դայէթ Փահիշ
Փիյաթլա սաթմապ իսթէյօր իտի:

Ինկիլիզին պիրի, մէրգուսուն շու. հա-
լինի կէօրիւնճէ, տէտի բի:

— Պու Խաչըն ալընա իթիպար իթ-
մէտիղինիզ հալտէ, թագլիտինէ պու գատար
Եիւքսէր Փիյաթ իսթէմէնին մանէասը նէ° . . :

Թէրզինին պիրի, հասթա օլան միւշ-
թէրիսինն հիսապ բուսուլասընը կէօթիւրիւր:

— Նէ° օ, սի՛ղ մի սինիզ, նէ իսթէր-
սինիզ:

— Այա, հիսապընըզը կէթիրտիմ, պիր
աղ բարա իսթէյէճէր իտիմ:

— Ես°, էջլէ իսէ, շու եազըխանէնին
կէօղիւնիւ ա՛չ:

Թէրզի եազըխանէնին կէօղէրինտէն պի-
քինի աչար,

— Խաչըր, օնու տէյիլ, օպիրինի ա՛չ:
Թէրզի տիկէր կէօղիւ աչար:

— Ճանըմ, օնու տա տէյիլ, եանըն-
տարինի:

Թէրզի իւչիւնճի կէօղիւ աչար:

— Հա°, իշթէ, իշինտէ պուլունանլա-
քըն ճիւմլէսի տէ պօրճ հիսապարը տըր:
կէթիրտիղին քեսահատը տա եանընա գօյ:

Վէ հասթա եաթաղըն իշինտէ տիկէր
Թարաֆա տէօնէր:

Բարա ալմապ իւմիւտիւնտէ պուլունան
Թէրզիտէքի հիստէթի տէրիսաթըր էտինիզ:

Չ.

Վարդ մը, շաքաթ օր մը ճամբուն վը-
յայ տեսած կաղ աղ քաւի մը ողորմութիւն
տուած էր. հետեւեալ կիրակի օրը զբօսա-
վայրի մը մէջ կը հանգիպի նոյն աղքատին,
որ հագուած սգուած՝ առանց կաղալու կը
քալէր:

— Ի՞նչ է ան բարեկամ, կըսէ զար-
մանօք. միթէ դուն երէկ կաղ չէիր° . . .

— Պօ՛շ լաւըտար. երէկ ուրիշ՝ այսօր
ուրիշ, կը պատասխանէ խաբերան. գործի
ժամանակ աշխատելու է° . . . յայտնի է որ
Աստուած անգամ վեց օր աշխատելէ ետքը
օր մը հանգիստ ըրաւ:

Չուարձախօս գիւղացի մը քահանային
գիմեր էր խոստովանելու:

— Ըսէ նայինք, օրհնած, խղճիդ դը-
պած մեղքերդ:

— Ախ, տէր հայր բերանս առաջ չեր-
թար. աճապա թողութիւն պիտի գտնեմ°:

— Քաջալերուէ՛ որդեակ, և ըսէ.

— Ցէր հայր, 4 ոչխար,

— Հէ° . . .

— Հինգ այծ:

— Է՛յ . . .

— Վեց հաւ և տասն ալ վառեակ:

— Է ի՞նչ ըրիր ատոնք:

— Փարան տուի ու օլուխ չօճուխովս
մէկ տարուան մէջ նստեցայ կերայ:

(Ցէր պապին բերանը բաց կը մնայ):

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք,

Այցետոմն, հասցէտոմն, նոմակա-
գլուխ, հրաւիրատոմն, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Գին գահացուցիչ, Դիմել հայելիի խըմ-
բագրութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տնօրէն խորհուրդս կը փութայ ծանուցանել որ ամսոյս 26ի երեկոյեան գումարուած նախապատրաստական ժողովի մէջ, դասախօսութիւններու հետեւեալ ծրագիրը կազմուած է:

Այդ ծրագրի մէջ նշանակուած է կամ ատկէ դուրս ուրիշ նիւթի դասախօսութիւնը ստանձնել փափաքողները կը հրաւիրուին գրաւոր կերպով դիմել Տնօրէն-խորհրդոյս: Դասախօսութիւնները կը լինին ընդդիմախօսական:

Տնօրէն-խորհուրդ

ԵՐԻՏ. ԸՆԹ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ռուսճուք 31 Մարտ 1898

ԾՐԱԳԻՐ

1. — Հայաստանի աշխարհագրութիւն, պատմական աշխատութիւններ:
2. — Պաշտօնական թերակղզիի մասին պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ: Պուշկար ազգի համառօտ պատմութիւնը մինչեւ այսօր:
3. — Հայոց հին մատենագրութիւնը:
4. — Հայոց նոր մատենագրութիւնը (Ռուսահայք եւ Տաճկահայք):
5. — Հայ լրագրութիւն:
6. — Ռուսաստան, Ռուսահայք եւ էջմիածին:
7. — Տաճկաստան, Տաճկահայք եւ ազգային հաստատութիւնները վարող անձերու ընթացքը Հայկական Խնդրի տեսակէտէ:
8. — Եւրոպական գրականութիւն (Անգլիական, Ֆրանսական, Գերմանական եւ Ռուսական):
9. — Կրթութիւն եւ ազգային ընկերական խնդիրներ:
10. — Տնտեսական աշխարհագրութիւն (համառօտ ծանօթութիւններ ամեն երկիրներու տնտեսական վիճակի մասին):
11. — Առողջապահութիւն:
12. — Իպսէն (Ibsen) եւ իւր փիլիսոփայութիւնը:

13. — Կանանց խնդիր:
14. — Տնտեսագիտական դպրոցներ (պատմական, ազատական եւ ընկերվարական):
15. — Ընկերաբանութիւն (Socialogie) եւ ընկերական խնդիր:
16. — Եւրոպական քաղաքական կուսակցութիւնները եւ իրենց ծրագիրները:
17. — Ընկերվարականութիւն եւ անխնայականութիւն:
18. — Յեղափոխական ընկերութիւնները Եւրոպայի մէջ, իրենց ծրագիրները եւ գործելու եղանակները (պատմական տեսութիւն):
19. — Թէնը, (Taine) իր փիլիսոփայութիւնը եւ միջավայրի թէօրիան:
20. — Փիլիսոփայութիւն եւ իւր զլխաւոր բաժանումները:
21. — Օկ. Բոնթ (Aug. Comte) եւ գրական փիլիսոփայութիւնը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ԻՐԱԿԱՆ ԴԷՊՅԵՐ

Ա. Փլիլիկ աղբօր հարսնիքը
Բ. Թապլաքեար վարժապետը
Գ. Խաբուած Ակնյին:

Ընթերցատէրներու փափագին համաձայն սոյն երեք ծիծաղաշարժ դէպքերու հաւաքածոն, որ աւելի քան 200 էջերէ պիտի բաշկանայ, արդէն մամուլը յանձնուած ըլլալով, բաժանորդագրութիւն մը բացուած է: Գինն է 1½ ֆրանք: Հրատարակութիւնը ամբողջանալէ ետքը պիտի վաճառի 2 ֆրանքի: Այս տութիւնը չըջարեւութեան հանուած բաժնետոմսը յառաջիկայ Մայիս 1ին Վառնայի մէջ «Հայերի» խմբագրութեան, իսկ գաւառները անոր Պատ գործակալներուն ներկայացնողը պիտի ստանայ սոյն գրքէն մէկ օրինակ կազմեալ:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.